

Անի հայազգի Մարգար անուն երկուս- սարդ մը յանիրաւի 5 տարուան բանտարկու- թեան դատապարտեցաւ, և որոյ վճռագիրը այս շարժում Պօլսոյ վճռաջինջ ատենան զըր- կուելով կը յուսամք թէ արդարութեանն ի գործ պիտի դուրս ելնայ անիրաւ վճիռը ջնջուի. բայց սա չեմք գիտէր թէ նոյն վը- ճիռը ջնջուելէն վերջ այս խեղճ զուարտե- լոյն փոխարինութիւն մը պիտի ըլլայ, և թէ զայն զրպարտող և բարոյապէս մեռցնողները պատժոյ պիտի ենթարկուին:

Չմշկածագէն լուր կուտան թէ Քուրտերը սկեր են հին պաքայէները պահանջել զիւ- ղացիներէն, և ճանբորդներու վնասել ուս- տի կը հետեւի թէ Տէրսիմի այնքան բա- ընկարգութիւնը ապարդիւն կը համարուի:

Արարտեան ընկերութեան ներկայացուցիչ Վասիլեան էջնետիէն առնուած լուրերը յա- ջըղակ են. կը յուսամք թէ զարդոցները օգտա- կար պիտի ըլլան:

Գաւառիս ողջամիտ Քուրք և Քրիստոնեայ ժողովուրդը մէջ խորհուրդ մը կը կազմուի մի- ութեամբ ճրագիր մը պատրաստել. ըստ իմ կարծեաց ասից աւելի օգտակար միջոց չը կայ որովհետեւ Քուրքաց և Հայոց մէջ ջըր- տութիւն ըլլալը դառն հետեանքներ կու- նենայ. ուստի պէտք է որ թէ մեր գաւառը և թէ Հայաստանի այլ գաւառները Քուրք ժողովուրդով ի միասին բողոքեմք զեղծմանց և անկարգութեանց դէմ: և երկրին պիտոյից համեմատ բարեկարգութիւն կը խնդրեմք. այս է օգտակար և կանոնաւոր միջոցը:

Տէրսիմի բանտարկեալ Քուրքերը դեռ կը մնան աստ, որոցմէ շատերը մահուան և ար- սորման վճիռ ընդունած էին, բայց դեռ գոր- ծողութիւն մը չեղաւ:

Այս տարուան բերքերը միջակ են. աջիտ- նի մշակութիւնը բաւական յառաջ կերթայ: Տեղեկ կառավարչին վրա գանձատներ պակաս չեն, բայց մինչև ցարդ եղած գանձատներէն ուրիշ օգուտ մը չը տեսնեք միայն Հայոց վրա ատելութիւնը շատնալու պատճառ եղաւ:

Ի վերջոյ ամեն ոք կը սպասէ բարեկար- գութեան, և երկու տեսակ բարեկարգութեան կը կարօտինք. մին կառավարութեան կողմէ, միւսն մեր Պատրիարքարանի: Քանզի եթէ ի մօտոյ Պատրիարքարանէն կտրուի որոշումներ չըլլան տեղոյս առաջնորդական, վարդապետա- կան, և վանօրէից խնդիրներու վրա, դեռ ևս շատ արէտներու ենթակայ պիտի ըլլամք:

նպատակն է նորաձեւութիւնը ջնջել Հայ Ազ- գիս մէջէն, որոշելով մի պարզ և վայելուչ ձև զգեստի և գլխարկի: Սոյն ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԱ- ՋՊԵՍՏՆԻ որ երկու տարին անգամ մը թիւթե փոփոխութիւններ պիտի կրէ դարձեալ անօրէն ժողովոյ կողմանէ որոշելով, կը բաղկանայ երկու կտորէ. մի կոճկէնէ (բէշ) և մի վընտցէ. զիտարին ալ զգեստին համե- մատ, որոյ օրինակ (մօտէ) պիտի ընդունի մէն մի անդամուհի:

2. Ամսական բաժնեգինն է մէկ արծաթ դահեկան, փափաքողը կրնայ աւելի վճարել:

3. Բաժնեգիններէն զոչացած հասոյթը պի- տի գործածուի ազգին բարոյական յառաջա- դիմութեանը նպաստելու:

4. Ընկերութեան մասնակցի վաճառքը Հայուհին պէտք է Տնօրէն ժողովոյ զիւսնին զբաւոր կերպով իմացնել:

5. Որ թէ կամի, կրնայ ընկերուհի ըն- դուռուիլ առանց բաժնեգին վճարելու. բաւ է որ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՋՊԵՍՏՆԻ կրեւու փափաքը յայտնէ. բայց իրաւունք չունի ընկերութեան նրա գործոց միջամտելու:

6. Ընկերութիւնս մէկ Ընդհանուր և մէկ Տնօրէն ժողով կը բաղկանայ:

7. Ընդհանուր ժողովոյ զիւսնը կը բաղկա- նայ երկու Ատենապետ և երկու Ատենադը- պրէ, որոց շրջանն է մի տարի:

8. Ընդհանուր ժողովը կը զոււարի երեք ամիսը մի անգամ որոշել տեղ մը, Տնօրէն ժողովոյ եռամսեայ տեղեկագրին վերահասու կը լինի, հասոյթն ու ծախքը կը քննէ ու կը հաստատէ:

9. Ընդհանուր ժողովն կրնայ օրինաւոր համարուիլ առաջին հրաւերին գտնուող ներ- կայից թուովը. բացակայէ երբէք իրաւունք չունին նորա որոշմանց դէմ բողոքելու:

10. Ընդհանուր ժողովը արտաքոյ կարգի նիստ ալ կրնայ ընել երբ իւր զիւսնը Տնօրէն ժողովը հարկ դատէ:

11. Տնօրէն ժողովը կը բաղկանայ եօթն անձէ, որ իւր մէջէն կրնարէ իւր զիւսնն ու գանձապետը: Եւ իւր շրջանն է երկու տարի:

12. Տնօրէն ժողովոյ պարտքն է Ընկերու- թեան նպատակին գործարարութեանը հսկել, ընկերութեանս զարգացման համար ամեն ջանք ի գործ դնել:

13. Կանոնագիրս վերաքննելի է առանց երբէք իւր նպատակը փոխելու:

(Մասիս)

փաշան Վեհ. Սուլթանին համակրութիւնը կը վայելէ, ուրիշ օր մը Սայրէտտին փաշան՝ Ն. Վե- հափառութեան կրաւորական կամ ներգործա- կան արամադրութիւններուն նախաձեռնող համեմատ կը գործէ: Մարդիւր և միջոցներու այս փո- փոխական տեսարանին մէջ վերջին շարժումն եղաւ Խասայի զօրաց հրամանատարութեան Ղազի Օսման փաշայէն առնուելով... Տէրվիշ փաշային յանձնուելին, որ մինչև վերջին ժա- մանակներս Տրապիզոնի կողմը գտնուած Օս- մանեան զօրաց կը հրամանատարէր: Կժբարգա- բար Փոքր-Սախոյ մէջ Տէրվիշ փաշային ցու- ցած բնաւորութիւնը Կ. Պօլսոյ մէջ հասա- նականաբար ունենալիք աղքատութեանը նը- կատմամբ յուսադարական չէ: Կարոյ Անգղիա- կան հիւպատոս Քրօթթըր հազարապետին տեղեկագրաց նայելով, Տէրվիշ փաշա Նրզնկայի շրջակայներն ապստամբաց դէմ իւր գործո- ղութեանց մէջ բոլորովին անկաս ընթացք մը բռնած էր. իւր հրամանատարութեան ներքեւ երեսուն վաշտ զօրք կար, և նահանգին կուսակալին իշխանութիւնն եր- բէք ձանչել չէր ուզէր: Քրօթթըր հազա- բապետը կը յարէ նաև թէ Տէրվիշ փաշան տերսիմիցի ապստամբներէն մեծաքանակ զու- մարներ ձեռք բերել ուզած էր...:

«Ստուգիւ Կ. Պօլսոյ վիճակը, մինչև իսկ Սըր Հ. Տ. Ուօլթի նման բարեկամական ոգով գործերը քննած անձի մը տեղեկութեանց նա- յելով, արդէն գրեթէ յուսահատական է: Բայց ինչպէս որ մեր թղթակցիցը կը յայտնէ, մեք պարզապէս զմեզ խաբած կը լինիմք, եթէ իրաց վիճակը մի միայն Ներուպական տեսա- կէտով դատել ուզենք: Քուրքից թէ Ներո- պական և թէ Ասիական մասին մէջ երկիրն հարստութեան մեծ աղբիւրներ ունի, բաւա- կան է որ ինամ տարուի և պարիշտութեամբ մատակարարուին: Քուրքից Ներուպական դա- ւաւաց մասին սպասել և յուսելու զատ լա- ւագոյն բան մը չեմք կրնար ընել: Պուլղարիա ազատ է այժմ, և իւր ապագայ բարգաւա- ճումն իրմէ կախեալ է: Արեւել Ռուսիի հուսա- կանոնաւոր և նուազ խաղաղ վիճակ մ'ունի, և բազում նկատմամբ իւր ապագայն դրացի իշխանութեան ապագայէն նուազ յուսադրա- կան է: Եւրամաց հետ նոր շփոթութիւնը ծագած են, որք զօրաւոր ձեռքով մը կարգի դրուելու պէտք պիտի ունենան: Բայց այդ երկրին համար շատ գործեր եղան և այժմ կրնայ ինքն իրեն համար սշտատելով, աւելի բարիք քա- ղել: Միով բանիւ, կը թուի թէ մեծ տերու- թիւնը Գրան Ներուպական երկիրներն հնար եղածին չափ իրենք իրենց պիտի թողուն առ այժմ: Բայց Փոքր-Սախոյ մասին խնդիրը բոլոր- րովին տարբեր է:

Փոքր Սախոյ նկատմամբ կատարեալապէս յայտնի իրողութիւն մ'է թէ իրական բան մը լինելիք չունի հոն՝ մինչև որ Գուռը գործնականապէս չը հարկադրի ընել զայն: Իրական դժուարութիւնն ոչ այնչափ այն ի- րողութիւնն է թէ անիշխանութիւն ու պար- տանի և Հայաստանի մէջ, որչափ թէ՛ Վուս փորէն մինչև Միջագետք գտնուած բոլոր եր- կիրը գոշաբարութեան, անգլայութեան և ա- ւերման ճարակ եղած է: Այս կէտին վրա մեր արտաքին գործոց նախարարութեան զրկուած տեղեկագիրք առատ և վճռական ապացոյցներ կուտան:

Անցեալ յունիս ամսոյ մէջ Սըր-Լէյքըրը ինք ևս իւր մի տեղեկագրին մէջ կը յայտնէր թէ Նիկոմիդիոյ մօտ Ատաբազարի ջրիտանեայ բնակչաց կողմէն պատգամաւորութիւն մ'ի- կած էր իրեն, որ ի զիմաց ջրիտանեայ և մահմետական բոլոր բնակչաց կը գանդատէր թէ 40,000 չափ շէքէպը այդ գաւառը զրկված են, թէ առևտուրը գրեթէ դադրած է՝ կե- նաց և ընչից ոչ ևս ապահովութիւն կենա- լուն պատճառաւ, և թէ բնակիչք գրեթէ պաշարման վիճակին մէջ կայրին, ըստ որում քաղաքէն դուրս ելնելու կը վախնան: Անդ-

ղիական դեպքանը Գարաթէոսորի փաշային ազդու զիտողութիւններ ըրաւ, որ պարզա- պէս պատասխանեց թէ Չէքէզաց գործած ճայրայեղութիւնները լսելով շատ չէր զարմա- նար, ըստ որում այդ ժողովուրդն Ներուպայէն վաճառուած և իրենց բոլոր ստացուածքէն զրկուած լինելով, Ասիա զրկուեցան՝ իրենց ապրուստին և պահպանութեան համար ա- ռանց որ և է պատրաստութիւն եղած լինե- լու. ուստի կամ անօթութեան մեռնելու և կամ գողնալու ստիպուելով, բնական էր որ, կրէր Օսմանեան նախարարն, այս վերջինն ընտրած լինին: Այս անվայել պատասխանը զիւսնագրութեան մէջ գորութիւն կրնար ունենալ, բայց Քուրք կառավարութեան բըռ- նաւորութիւնը խիստ բացորոշապէս երևան կը հանէ:

Նրկրին ուրիշ մասերէն ալ կամ հարստա- հարութեան և կամ անհոգութեան սոյնօրի- նակ տեղեկագիրք զրկուած են: Ենկերիի գաւառին մէջ, Միլիի հիարի մօտերը, Սա- քարիա գետին մէկ կամուրջն, որոյ վրայէն կանցնէր գաւառին գրեթէ բոլոր առևտուրն, ասկէ մէկ ու կէս տարի առաջ վլաւ, և նա- հանդին կուսակալն երեք անգամ խոտացաւ թէ վերանորոգել պիտի տայ զայն: Բայց կա- մուրջին կից գտնուած հողը կառավարական երկու պաշտօնատարաց կը վերաբերի, որ կըսուէր թէ այդ հողն հասարակային մեծ ծառայութեանց ի վարձատրութիւն ընդու- նած էին: Նրք որ կամուրջն անցանկի էր, զիւրացիք գետեղեքին վրայ բուսած երեզ- ները կը հաւաքէին և քաղաք տանելով կը վաճառէին: Բայց կամուրջը փլած լինելով, վերոյիշեալ հողին տէրն եղող կառավարական պաշտօնատարը իրենք իրենց հաշուոյն հա- մար կը հաւաքէին երեզները, թէև ասոնք իրենց շնորհուած հողին հետ վերաբերու- թիւն չունէին: Ուստի, այսպիսի բացարձակ շահ մ'ունենալով, այդ պաշտօնատարը կա- մուրջին վերանորոգման ընդդիմութիւն ըրին և յաջողեցան ի մեծ վնաս վաճառականու- թեան գաւառին:

(Կը շարունակվի)

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Շնորհակալութեամբ ստացանք պ. Զաքարիա Գրիգորեանցից «Ներկուց իններորդ դարու» վեր- նագրով պ. Երեմիայի հեղինակութիւնը:

Հուովն Lince անուանված ակադեմիան նորե- բուն իր վախճանված անդամներից մէկի տեղ ընտրեց մը կնոջ, կուսուհի Նրախիա կատանի- Լօվատելի: Ակադեմիայի նոր անդամը գիտնական- ների ժողովին շնորհակալութիւն յայտնեց մի նա- մակով, որ գրված էր լատիներէն լեզուով: Կոմ- սուհի Լօվատելիի գրուածներէց նշանաւորն են նրա աշխատանքները ազգագրութեան (էթնոգրաֆիայի) վերաբերութեամբ:

«Մշակի» սյուրբայ համարը հրատարակում ենք առանց հեռագիրների, որովհետև «Միջազգային» ը- կերութիւնից այսօր հեռագիրներ չեն ստացած:

Ստացանք Վ. Կենցեալի Միլիթարեաններից հրա- տարակիւղ «Բազմապէս» հանդիսի վերջին տես- բակը: Այդ հրատարակութեան մէջ, ինչպէս միշտ, ոչինչ չը կայ: Կայ, օրինակ, զբարառ լեզուով հե- ղինակած մի դժուարամարս բնական գրուածք:

Խմբագիր—հրատարակիչ Գ.Ի.Գ.ՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՊԱՐԶԱՍԷՐ ՀԱՅՈՒՆԵԱՅ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Պարզապէս Հայուհեաց ընկերութեան Տնօ- րէն խորհուրդը պարտ անձին կը համարի հրաւիրել բոլոր Ազգասէր և Տնտեսագէտ Հա- յուհիք՝ որք փափաքին մասնակցել ընկերու- թեանս, ընկերութիւն մը որ երկու վեմէնը- պատակ միանգամայն կը պարունակէ իւր մէջ, ջնջել Հայազգի իրական սեռի մէջէն նորասի- րութեան ազգակործան միտքութիւնը և օգնել Ազգին բարոյական յառաջդիմութեան, խն- դրելով միանգամայն որ առանց մասնաւոր հրաւերի սպասելու՝ բարեհաճին Տնօրէն խոր- հուրոյ զիւսնին գրաւոր կերպով իմացնել իւ- րեանց մասնակցելը:

Ո՛ր Ազգասէր Հայուհիք, կը հրաւիրեմք զՁեզ՝ օգուտ քաղել պատեհ աւիթէն: Դուք՝ տանիններորդ ազատ դարու երկուսարու- հիք՝ մեծ յոյս, մեծ հաւատ ունենալով Ձեր վրա՝ ձեռնարկած ենք գործոյս, և դուք՝ կի- րականացնէք մեր յոյսերն Ձեր եռանդուն աջակցութեամբ, որոյ մասին կը փութամք յայտնել մեր անհուն շնորհակալեքը, և որով ցոյց կը տաք թէ կարող էք վայելել սալ Ազգին՝ իրական սեռի մէջ նորա տարա- ծած զոյգն ինչ լուսոյ արդիւնքը, բարու- քում մը, որ ուրիշ բարեգործներու առաջ- նորդ պիտի լինի: ԿԱՆՈՆԱԳԻՐ ՊԱՐԶԱՍԷՐ ՀԱՅՈՒՆԵԱՅ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ Հաստատեալ 1879 Յուլիս 15 ի Սամաթիա. 1. Ընկերութեանս

ԹՈՒՐԻՈՑ ՎԻՃԱԿԸ

Թայմի լրագիրը սեպտեմբեր 4 թիւ թեր- թին մէջ Քուրքից ընդհանուր վիճակին և Փոքր-Սախոյ բարեկարգմանց խնդրոյ վրա հե- տեւալ կարեւոր յօդուածն հրատարակած է, որուն առաջին հատուածին մէջ ինչ ինչ բա- րեփոխութիւններ ու յապաւումներ ընելու հարկ տեսած ենք:

«Անցեալ շարժում, կըսէ Թայմի, մեր Կ. Պօլսոյ թղթակցին մէկ նամակն հրատա- բակեցինք, որ Քուրքից ելեմտական նա- խարարութեան դժուարութիւններն և գոր- ծածած միջոցները կը նկարագրէր: Այդ նա- մակը Կ. Պօլսոյ վիճակին նկատմամբ վերջին ժամանակներս երեսփոխանաց ժողովին մէջ Սըր Հէրի Տրեմբլնտ Ուօլթի տուած տեղե- կութեանց վրա հրահանգիչ բացատրութիւն մ'էր: Ինչպէս որ մեր թղթակցին տուեալն ար- րուպական ուրիշ երկրի մը մէջ իրաց այդպի- սի վիճակ մը քիչ ժամանակէն սոսկալի արեւտ մը կրնար յառաջ բերելը, բայց Քուրքից մէջ ժողովուրդն իրաց ձախող վիճակին հետ այն- պիտի ընտանութիւն մը ստացած է որ անտար- բեր կըսէ զինք: Նախարար նախարարի կը յա- ջորդէ, աշխարհավարութիւն աշխարհավարու- թեան, մեքենայութիւն մեքենայութեան և հակառակ ամենեցուն գործոց ընդհանուր վե- լոյթ մը կընծայէ...: Իմ մը Մահմուտ Նէտիմ՝

